այլ ոչ է իմ կամք պատմել ձեզ գործ անցեալք և ոչ յարուցանել սիրտս ձեր առ 'ի գոյթ և կամ 'ի նախանձ 'ի վերայ նախնեաց մերոց բարեաց և չարեաց, որպէս բազումք տկարք գանգատեն զցաւս իւրեանց, և փոքր բժիշկ որ գտանի դարմանող և 'ի պատճառէ դեղօրէից փարատող, և ես ոչ սպասիմ, զի գանկատն իմ վասն տկարութեան ճեասցէ թափուր 'ի դարմանէ բժշկողացէ, նաև մի՛ ձկտիցէ զմիտս ընթերցողիդ թէ կամիմ ասել ես փոքրիկս միայն գտայ 'ի մէջ բոլոր տկարացեալ ազգին իմոյ ցուցանող հնարս բժշկութեան, քաւ լիցի. ոչ թէ միայն խոստովանիմ՝ նաև երդնում առաջի ձեր, որ 'ի միտս իմ տպաւորեալ ունիմ, զի ոչ պակասի 'ի միջի ազգի մերմէ բժիշկ իմաստուն, անձամբ բարեպաշտ և կատարեալ սիրով կապակցեալ ընդ ազգս իւր և ընդ աշխարհս Հայոց, և կարող ճանաչել դեղն տկարութեան մերոյ, այլ վասն բազում պատճառաց ոչ ոք տեսի բանալ զբերանս իւր և յայտնի ազգին մերոյ առնել դեղ ախտին տկարութեան մերոյ՝ թէ ոչ տխուր դիմօք հոգւոց հանելով ճշտելով զպատուական սիրտս իւր կան և ճեան մինչև ցայսօր. նաև ես եղէ ժամանակ ընդ ժամանակս այսպէս երկմտելով 'ի գանազան պատճառէ վասն բանալոյ զբերանս իմ, երբեմն ամօթ 'ի ծերոց է և երկիւղ 'ի բռնաւորաց է և 'ի նախանձոյ հառարակ ժողովրդենէ՝ լռելեան